# ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ
# ԽՍՀ ՄԻՈՒԹՅԱՆ ԱՐՏԱՔԻՆ ՊԵՏԱԿԱՆ ՊԱՐՏՔԻ ԵՎ ԱԿՏԻՎՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԻՐԱՎԱՀԱՋՈՐԴՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԼՐԱՑՈՒՄՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Սույն Համաձայնագրի մասնակից պետությունները, հաստատելով ԽՍՀ Միության արտաքին պետական պարտքի եւ ակտիվների նկատմամբ իրավահաջորդության մասին 1991 թվականի դեկտեմբերի 4-ի Պայմանագրից բխող պարտավորությունների կատարմանն իրենց համախոհությունը, համաձայնեցին ներքոհիշյալի մասին.

## ՀՈԴՎԱԾ 1

Ռուսաստանի Դաշնությունը եւ Ուկրաինան, հանդիսանալով ԽՍՀ Միության ակտիվների օգտագործման եւ պարտքերի սպասարկմանը հսկող Միջպետական խորհրդի հիմնական անդամներ, համանախագահում են Միջպետական խորհրդում: Միջպետական խորհրդի մյուս անդամները երրորդ համանախագահին նշանակում են ռոտացիայի հիման վրա:

## ՀՈԴՎԱԾ 2

Լիազորված բանկը Միջպետական խորհրդին եւ նրա անդամներին տրամադրում է իր գործառնությունների մասին լրիվ տեղեկատվություն:
Միջպետական խորհուրդը մրցութային հիմքով նշանակում է անկախ հաշվեքննիչի, որին ներկայացվում է Լիազորված բանկի կողմից Միջպետական խորհրդին ներկայացվող հաշվետվությունը կազմելու համար անհրաժեշտ ցանկացած փաստաթուղթ, ոչ պակաս, քան տարին մեկ անգամ:

## ՀՈԴՎԱԾ 3

Արտաքին տնտեսական բանկը պահպանում է Լիազորված բանկի իրավունքները: Տվյալ Համաձայնագրի Հավելվածում բերված համապատասխան փոփոխությունները մտցվում են արտաքին տնտեսական բանկի Կանոնադրության մեջ Լիազորված բանկին միջազգային բնույթ հաղորդելու համար: Միջպետական խորհուրդը, կողմերի լիազորված ներկայացուցչությամբ, շարունակում է բարձրագույն մարմին մնալ Լիազորված բանկի համար: Միջպետական խորհուրդը ստեղծում է Մոսկվայում տեղակայված փորձագետների մակարդակով մշտապես գործող հսկող մարմին:
Լիազոր ներկայացուցիչների ձայները Միջպետական խորհրդում բաշխվում են նախկին ԽՍՀ Միության արտաքին պարտքի մարմանն ուղղված Կողմերի վճարումների բաժնին համապատասխան: Միջպետական խորհրդի որոշումներն ընդունվում են նիստին մասնակցող Խորհրդի անդամների 80 տոկոսից ոչ պակասի ձայներով: Միջպետական խորհրդի նիստերը համարվում են իրավազոր, դրանցում 80 տոկոսից ոչ պակաս ձայներ ունեցող լիազոր ներկայացուցիչների մասնակցությամբ:

## ՀՈԴՎԱԾ 4

Նախկին ԽՍՀ Միության սահմանում ամբողջ սեփականության բաշխման վերաբերյալ չափանիշների եւ սկզբունքների մշակման Միջպետական հանձնաժողովի լիազորություններն ու գործառույթներն անցնում են Միջպետական խորհրդին եւ նշված Հանձնաժողովի գործունեությունը դադարեցվում է:

## ՀՈԴՎԱԾ 5

1991 թվականի հոկտեմբերի 28-ի փոխըմբռնման մասին Հուշագիրը բաց կլինի նշված Հուշագիրը չստորագրած սույն Համաձայնագրի մասնակից պետությունների

Կառավարությունների անունից ստորագրելու համար:

ՀՈԴՎԱԾ 6

Սույն Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում դրա ստորագրման պահից:

Կատարված է Մոսկվա քաղաքում 1992 թվականի մարտի 13-ին, մեկ բնօրինակով, ռուսերեն:
Բնօրինակը պահվում է Բելառուսի Հանրապետության կառավարության արխիվում, որը դրա հավաստված պատճենները կուղարկի սույն Համաձայնագիրը ստորագրած պետություններին:

* Համաձայնագիրը Հայաստանի Հանրապետության համար ուժի մեջ է մտել 1992 թվականի մարտի 13-ից: